ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

----- հուլիսի 2022 թվականի № -Ա
ք. Երևան

«ԷՆԵՐԳՈՏԵԽՆԻԿԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔՆ ԱՌԱՆՑ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №479Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում), «Էներգետիկայի մասին» օրենքով սահմանված՝ էլեկտրական էներգիայի գնման երաշխիքի ժամկետը լրանալու և էլեկտրական էներգիայի մրցակցային պայմաններով գործող արտադրողների շարքին դասվելու հիմքով, 2022 թվականի փետրվարի 1-ից ուժը կորցրած է ճանաչվել «ԷՆԵՐԳՈՏԵԽՆԻԿԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մայիսյան գյուղի տարածքում Զույգաղբյուր-Գյումրի խմելու ջրի ջրատարի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայանից (լիցենզիա N0075) առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը: Որոշումն ուժի մեջ է մտել 2022 թվականի փետրվարի 1-ից և անբողոքարկելի է դարձել 2022 թվականի ապրիլի 1-ից,

2) Ընկերությունը 2022 թվականի փետրվարի 10-ի №Է-011 գրությամբ դիմել է Հանձնաժողով՝ հայտնելով իր անհամաձայնությունը Որոշման դրույթներին և տեղեկացնելով Որոշումը բողոքարկելու Ընկերության մտադրության մասին,

3) Հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 28-ի №ՍԱ/34.3-Մ2-4/610-2022 գրությամբ Ընկերությունը տեղեկացվել է, որ վարչական կարգով վարչական մարմին ներկայացվող բողոքը պետք է համապատասխանի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 72-րդ հոդվածով սահմանված պահանջներին, և Հանձնաժողովը Որոշման բողոքարկման գործընթաց կարող է

նախաձեռնել Օրենքի պահանջներին համապատասխան վարչական բողոք ներկայացնելու դեպքում,

4) Օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ վարչական բողոքը կարող է բերվել՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում,

5) Բողոքի ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ Ընկերության կողմից Որոշման դեմ բողոք ներկայացվել է 2022 թվականի ապրիլի 11-ին՝ Օրենքով սահմանված բողոքարկման ժամկետը լրանալուց հետո, և ժամկետը բաց թողնելը Օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով հարգելի չի ճանաչվել,

և հիմք ընդունելով Օրենքի 73-րդ հոդվածի 3-րդ մասը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերության 2022 թվականի ապրիլի 11-ի №Է-031 գրությամբ Որոշման դեմ ներկայացված բողոքը թողնել առանց քննարկման:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան կամ Հանձնաժողով, և բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
հուլիսի 2022թ.